Հաճախակի տրվող հարցեր

1.Պե՞տք է արդյոք ներբեռնեմ հավելվածը՝ Գլենդելում կայանելու համար վճարելիս:

Ոչ, դուք դեռ կարող եք վճարել կրեդիտ քարտով կամ մետաղադրամով: Կարող եք նաև վճարել առցանց՝ https://m2.paybyphone.com/parking: Գլենդելն առաջարկում է բջջային վճարման այս տարբերակը՝ որպես վճարման հավելյալ եղանակ այն մարդկանց համար, ովքեր ապրում, աշխատում և ժամանակ են անց կացնում Գլենդելում:

2.Կարելի՞ է հավելվածը ներբեռնել և՛ Apple, և՛ Android սարքի միջոցով:

Այո՛, PayByPhone բջջային հավելվածը անվճար հասանելի է Apple-ի App Store-ից և Google-ի Play Store-ից:

3. Իմ կրեդիտ քարտի փոխարեն կարո՞ղ եմ օգտագործել Apple կամ Samsung Pay:

Այո, PaybyPhone-ն ընդունում է Apple Pay-ը և Samsung Pay-ը:

4. Որքանո՞վ է ապահով PayByPhone համակարգը:

Վճարման տվյալները փոխանցվում են կրեդիտ քարտի պրոցեսորին: Ոչ մի այլ կողմին հասանելի չեն ձեր քարտի տվյալներին: Միջազգային և ազգային վճարային քարտերի ոլորտի (PCI) վարկային քարտերի անվտանգության արձանագրությունները և պահանջները պարտադրում են, որ մեր մատակարարները պահպանեն տվյալների անվտանգության, գաղտնագրման, ներթափանցման փորձարկման և սերվերի անվտանգության ամենաբարձր մակարդակները:

5.Արդյո՞ք պետք է պահպանեմ իմ դեբետային/վարկային քարտի տվյալները հավելվածում գործարքը կատարելու համար:

Ոչ, գործարքը կատարելու համար կարիք չկա պահպանել ձեր քարտի տվյալները: Ձեր հարմարության համար կարող եք դա անել՝ որպես հեռախոսային դրամապանակի հատկություն, սակայն դա ըստ ցանկության է:

6. Արդյո՞ք հավելվածը հետևում է իմ գտնվելու վայրին:

Հավելվածից օգտվելու համար ձեր գտնվելու վայրի մասին տեղեկությունը պարտադիր չէ: Տեղադրության տվյալները թույլ են տալիս հավելվածին օգտագործել ձեր ընթացիկ գտնվելու

վայրը՝ ձեզ հասանելի ամենամոտ կայանման գոտիները տրամադրելու համար: Եթե որոշեք չկիսվել ձեր գտնվելու վայրով, կարող եք ձեռքով մուտքագրել գոտու համարը:

7. Արդյո՞ք Գլենդելի քաղաքապետարանը կարող է մուտք ունենալ իմ բջջային սարքին:

Ոչ: Գլենդելի քաղաքապետարանին հասանելի չէ ձեր սարքը ։

8. Ո՞ւմ է հասանելի իմ կայանման տվյալները։

Տվյալները հասանելի կլինեն միայն Գլենդելի քաղաքապետարանի, Գլենդելի Ոստիկանության բաժանմունքի լիազորված և հաստատված անձնակազմին և մեր ավտոկայանատեղի մատակարարին: Անձնակազմն օգտագործում է կայանման տվյալները՝ վճարովի ավտոկայանատեղերի գոտիները հաստատելու և կայանման համակարգը արդյունավետ կառավարելու համար:

9.Որտե՞ղ կարող եմ տեսնել իմ անդորրագրերը կամ կայանման գործարքների պատմությունը PayByPhone-ն օգտագործելուց հետո:

Հավելվածում, կամ կարող եք այցելել՝ paybyphone.com/receipts: Հասանելի է միայն գրանցված հաշիվ ունենալու դեպքում։